Ապրիլի 3-9-ին օդի ջերմաստիճանը նվազել է՝ պայմանավորված հյուսիս-արևմուտքից սառը օդային հոսանքների ներթափանցմամբ, և օդի օրական միջին ջերմաստիճանը ցածր է եղել նորմայից 2-7, առանձին վայրերում՝ 11 աստիճանով: Այդ օրերին նվազագույն ջերմաստիճանը լեռնային շրջաններում և Լոռիում գրանցվել է -10 -15°C, Աշոցքում՝ -17°C, Սյունիքում՝ -2 -7°C, Արարատյան դաշտում և Տավուշում՝ -1 -3°C: Օդի օրական միջին ջերմաստիճանը 1-3 աստիճանով ցածր է եղել նորմայից նաև ամսի 28-ին և 29-ին:

Լոռիում, Տավուշում, Կոտայքում, Շիրակում, Արարատյան դաշտում և Վայոց ձորում ամսական տեղումների քանակը կազմել է նորմայի 110-155%-ը, Արտաշատում (Արարատի մարզ)՝ 193%, Գեղարքունիքում՝ 65-90%, Սյունիքում՝ 25-54% (բացառությամբ Սիսիանի՝ 90%):

Արարատյան դաշտում և նրա նախալեռներում ձյան ծածկ չի դիտվել, բացառությամբ ամսի 4-ի` 3 սմ: Լոռիում, Տավուշում և Սյունիքում ձյան ծածկը վերացել է ամսի 8-ին, լեռնային շրջաններում` 20-ին: Ապրիլի 30-ի դրությամբ հանրապետությունում ձյան ծածկը պահպանվել է միայն 2500մ-ից բարձր մակերևույթների վրա:

Առանձին օրեր Գեղարքունիքում, Լոռիում, Տավուշում, Արարատյան դաշտում և Արագածոտնի լեռնային շրջաններում դիտվել է քամու ուժգնացում, արագությունը` 15-20 մ/վրկ, պոռթկումները` 23-27 մ/վրկ:

Հանրապետության գետերի մեծ մասում միջին ամսական ելքերը կազմել են նորմաների 110-140%-ը:

Սևանա լճի մակարդակն ամսվա ընթացքում բարձրացել է 17 սմ-ով և 2005թ. ապրիլի 30-ի դրությամբ կազմել 1897.97 մ, որը 2004թ. նույն օրվա համեմատ բարձր է եղել 43 սմ-ով:

5.9. Շրջակա բնական միջավայրի աղտոտվածության 2005թ. ապրիլ ամսվա մոնիթորինգ

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության, հանրապետության բնական շրջակա միջավայրը 2005թ. ապրիլ ամսին ունեցել է հետևյալ բնութագիրը:

Օդային ավազանի որակի մոնիթորինգ: Ապրիլին օդային ավազանի դիտարկումներ կատարվել են հանրապետության Երևան, Գյումրի, Վանաձոր, Հրազդան, Ալավերդի և Արարատ քաղաքներում տեղակայված 13 մշտական լաբորատոր դիտակայանների միջոցով:

Վերցվել է օդի 4438 փորձանմուշ, որոշվել են մթնոլորտն աղտոտող վերահսկվող նյութերի կոնցենտրացիաները:

- Երևան քաղաքում ապրիլին վերցվել է օդի 3090 փորձանմուշ, որից 25-ը` փոշու, 104-ը` գետնամերձ օզոնի, 387-ական` ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, ազոտի օքսիդի, 360-ը` արոմատիկ ածխաջրածինների ու քլորոպրենի: Փոշու միջին ամսական սահմանային թույլատրելի կոնցենտրացիան (ՍԹԿ) գերազանցվել է 1.3, ծծմբի երկօքսիդինը` 2.6, ազոտի երկօքսիդինը` 2.8, գետնամերձ օզոնինը` 1.7, բենզոլինը` 1.5 անգամ: Ազոտի երկօքսիդի միանվագ առավելագույն ՍԹԿ-ն գերազանցվել է 3.8 անգամ: Մարտ ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիան նվազել է 1.5, իսկ գետնամերձ օզոնինը` բարձրացել 1.2 անգամ:

Հսկվող աղտոտիչների առավելագույն և միջին ամսական կոնցենտրացիաները ք.Երևանի մթնոլորտում 2005թ. ապրիլ ամսին

Աղտոտիչ նյութերի անվանումը	Կոնցենտրացիաները, մգ/մ ³	
	առավելագույն	միջին ամսական
Փոշի	-	0.2
Ծծմբի երկօքսիդ	0.31	0.13
Ազոտի երկօքսիդ	0.32	0.11
Ազոտի օքսիդ	0.27	0.06
Գետնամերձ օզոն	0.128	0.050
Քլորոպրեն	-	-
Բենզոլ	0.501	0.150
Տոլուոլ	0.649	0.390
Քսիլոլ	-	-
Էթիլբենզոլ	-	-

- Գյումրի քաղաքում փոշու պարունակության որոշման համար վերցվել է օդի 26 փորձանմուշ: Փոշու միջին ամսական ՍԹԿ-ն գերազանցվել է 2.0 անգամ: Մարտ ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիայի փոփոխություն չի դիտվել:

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

- Վանաձոր քաղաքում վերցվել է օդի 780 փորձանմուշ, որից 78-ը՝ փոշու, 234-ական՝ ծծմբի երկօքսիդի, ածխածնի օքսիդի և ազոտի երկօքսիդի: Փոշու միջին ամսական ՍԹԿ-ն գերազանցվել է 2.0, ծծմբի երկօքսիդինը՝ 2.2, ազոտի երկօքսիդինը՝ 1.3 անգամ: Ածխածնի օքսիդի միանվազ առավելագույն ՍԹԿ-ն գերազանցվել է 1.4, ազոտի երկօքսիդինը՝ 2.2 անգամ: Մարտ ամսվա համեմատ ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան բարձրացել է 1.3, իսկ փոշունը՝ 1.5 անգամ:

Հսկվող աղտոտիչների առավելագույն և միջին ամսական կոնցենտրացիաները ք.Վանաձորի մթնոլորտում 2005թ. ապրիլ ամսին

Աղտոտիչ նյութերի անվանումը	Կոնցենտրացիաները, մգ/մ ³	
	առավելագույն	միջին ամսական
Փոշի	-	0.3
Ծծմբի երկօքսիդ	0.42	0.11
Ածխածնի օքսիդ	7	3
Ազոտի երկօքսիդ	0.19	0.05

- Հրազդան քաղաքում ցեմենտի փոշու պարունակության որոշման համար վերցվել է օդի 26 փորձանմուշ: Փոշու միջին ամսական ՍԹԿ-ն գերազանցվել է 4.0 անգամ: Մարտ ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիայի փոփոխություն չի դիտվել:
- Ալավերդի քաղաքում վերցվել է օդի 494 փորձանմուշ, որից 26-ը՝ փոշու, 156-ական՝ ծծմբի երկօքսիդի, ածխածնի օքսիդի և ազոտի երկօքսիդի: Փոշու միջին ամսական ՍԹԿ-ն գերազանցվել է 1.3, ծծմբի երկօքսիդինը՝ 10.8 անգամ: Ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միանվազ առավելագույն ՍԹԿ-ները գերազանցվել են համապատասխանաբար՝ 2.0 և 1.2 անգամ: Մարտ ամսվա համեմատ որոշվող նյութերի կոնցենտրացիաների փոփոխություն չի դիտվել:

Հսկվող աղտոտիչների առավելագույն և միջին ամսական կոնցենտրացիաները ք.Ալավերդու մթնոլորտում 2005թ. ապրիլ ամսին

Աղտոտիչ նյութերի անվանումը	Կոնցենտրացիաները, մգ/մ ³	
	առավելագույն	միջին ամսական
Փոշի	-	0.2
Ծծմբի երկօքսիդ	0.98	0.54
Ածխածնի օքսիդ	5	2
Ազոտի երկօքսիդ	0.10	0.04

- Արարատ քաղաքում ցեմենտի փոշու պարունակության որոշման համար վերցվել է օդի 22 փորձանմուշ: Փոշու միջին ամսական ՍԹԿ-ն գերազանցվել է 2.0 անգամ: Մարտ ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիայի փոփոխություն չի դիտվել:

Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգ: Ապրիլին մակերևութային ջրերի մուշտուկ կատարվել է հանրապետության 25 գետերից, Երևանյան լճից և Կեչուտի ջրամբարից:

Վերցվել է 62 փորձանմուշ, որոշվել է 2592 ցուցանիշ (10-ում որոշվել է 38 ցուցանիշ, 24-ում՝ 42, 28-ում՝ 43):

Փամբակ գետի Վանաձոր քաղաքից ներքև ընկած հատվածքում թթվածնի կենսաքիմիական հնգօրյա պահանջարկի (ԹԿ₅) ՍԹԿ-ն գերազանցվել է 1.5, իսկ ամոնիում իոնինը՝ 3.5 անգամ:

Դեբեդ գետի ավազանից վերցված փորձանմուշներում գերազանցվել են ամոնիում և միտրիտ իոնների ՍԹԿ-ները: Այրում գյուղից ներքև և սահմանի մոտ ընկած հատվածքներում միտրիտ իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է համապատասխանաբար 1.5 և 1.6, իսկ ամոնիում իոնինը՝ 1.3 և 1.5 անգամ: Ախթալա գետի գետաբերանի շրջանում սուլֆատ իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 2.5 անգամ: Հսկվող մյուս աղտոտիչների կոնցենտրացիաները եղել են նորմաների սահմաններում:

Հրազդան գետում դիտվել է ամոնիում իոնով բարձր աղտոտվածություն՝ Դարբնիկ գյուղից ներքև ընկած հատվածքում ՍԹԿ-ն գերազանցվել է 20.7, իսկ գետաբերանի մոտ ընկած հատվածքում՝ 36.9 անգամ:

Սևջուր, Քասաղ, Հրազդան, Սևանա լճի ավազանի գետերից և Երևանյան լճից վերցված փորձանմուշներում գերազանցվել են նիտրիտ, նիտրատ, ամոնիում իոնների, նավթամթերքի, ալյումինիումի և վանադիումի ՍԹԿ-ները: Նիտրիտ իոնի ՍԹԿ-ն վերցված բոլոր փորձանմուշներում գերազանցվել է 1.4-3.8 (Գետառի գետաբերանի մոտ ընկած հատվածքում՝ 6.7 անգամ), նիտրատ իոնինը Սևջուր, Գետառ գետերում և Երևանյան լճում՝ 1.1-1.9, ամոնիում իոնինը՝ 1.6-4.4, նավթամթերքինը՝ 1.6-3.2 (Էջմիածին քաղաքից ներքև ընկած հատվածքում՝ 4.8 անգամ), վանադիումինը՝ 2-11 անգամ: Ալյումինիումի ՍԹԿ-ն գերազանցվել է միայն Երևանյան լճում՝ 16.1 անգամ: Սևանա լճի ավազանի գետերից վերցված բոլոր փորձանմուշներում ամոնիում իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 1.4-2.9 (Վարդենիս գետի գետաբերանի շրջանում՝ 6.6 անգամ), ալյումինիումինը՝ 2.2-9.5 (Ձկնագետի և Շորժա գետի գետաբերանների շրջանում համապատասխանաբար՝ 16.1 և 17.2 անգամ), վանադիումինը՝ 2-7 (Գավառագետի և Լիճք գետի գետաբերանների շրջանում՝ 12 անգամ), նավթամթերքինը՝ 1.6 անգամ (Շորժա գետի գետաբերանի շրջանում՝ 3.2 անգամ): Հսկվող մյուս աղտոտիչների կոնցենտրացիաները եղել են նորմաների սահմաններում:

Արաքս, Ազատ, Վեդի, Արփա, Մեղրիգետ, Ողջի, Արծվանիկ, Գեղի, Որոտան, Գորիսգետ գետերից և Կեչուտի ջրամբարից վերցրած փորձանմուշներում գերազանցվել են նիտրիտ, նիտրատ, սուլֆատ, պղինձ իոնների, երկաթի, ալյումինիումի և վանադիումի ՍԹԿ-ները: Ազատ և Արծվանիկ գետերի գետաբերաններից վերցված փորձանմուշներում դիտվել է նիտրիտ իոնով բարձր աղտոտվածություն՝ ՍԹԿ-ն գերազանցվել է համապատասխանաբար 23.7 և 28.3 անգամ: Մյուս դիտակետերից վերցված փորձանմուշներում նիտրիտ իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 1.3-9.2 անգամ: Նիտրատ իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 1.5-2.8, պղինձ իոնինը՝ 2-10 (Կապան քաղաքից ներքև ընկած հատվածքում՝ 30 անգամ), վանադիումինը՝ 2-10 (Սիսիան քաղաքից վերև ընկած հատվածքում՝ 20 անգամ), նավթամթերքինը՝ 1.6-4.8 անգամ (Մեղրիգետի գետաբերանի մոտ ընկած հատվածքում՝ 8.0 անգամ): Արմաշ գյուղից ներքև (Արաքս գետ), Ազատ գետի գետաբերանից, Ուրցաձոր գյուղից (Վեդի գետ), Եղեգնաձոր, Ջերմուկ, Վայք քաղաքներից վերև (Արփա գետ) ընկած հատվածքներում և Կեչուտի ջրամբարում դիտվել է ալյումինիումով բարձր աղտոտվածություն՝ ՍԹԿ-ն գերազանցվել է 10.8-33.5 անգամ: Մյուս դիտակետերում ալյումինիումի ՍԹԿ-ն գերազանցվել է 1.8-8.3 անգամ: Արաքս և Ազատ գետերից վերցված փորձանմուշներում սուլֆատ իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 1.4-2.5 անգամ:

Հսկվող մյուս աղտոտիչների կոնցենտրացիաները եղել են նորմաների սահմաններում:

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Մակերևութային ջրերի աղտոտվածության վիճակը 2005թ. ապրիլ ամսին

Անվանումը	Դիտակետի համարը	Դիտակետը (հատվածքը)	ՍԹԿ-ն գերազանցող միացությունների կոնցենտրացիաները											
			ԹԿՊ ₅ (ՍԹԿ՝ 3 մգ/դմ ³)	Նիտրիտ իոն (ՍԹԿ՝ 0.024 մգN/դմ ³)	Նիտրատ իոն (ՍԹԿ՝ 9.1 մգN/դմ ³)	Ամոնիում իոն (ՍԹԿ՝ 0.39 մգN/դմ ³)	Նալթամթերք (ՍԹԿ՝ 0.05 մգ/դմ ³)	Սուլֆատ իոն (ՍԹԿ՝ 100 մգ/դմ ³)	Մագնեզիում իոն (ՍԹԿ՝ 40 մգ/դմ ³)	Ալյումինիում (ՍԹԿ՝ 0.04 մգ/դմ ³)	Վանադիում (ՍԹԿ՝ 0.001 մգ/դմ ³)	Երկաթ (ՍԹԿ՝ 0.001 մգ/դմ ³)	Պղինձ իոն (ՍԹԿ՝ 0.5 մգN/դմ ³)	
Փամբակ	1	Հարթագյուղից 0.5 կմ վերև	-	-	-	0.87	-	-	-	-	-	-	-	-
	4	ք.Վանաձորից 4.5 կմ ներքև	4.48	-	-	1.38	-	-	-	-	-	-	-	-
Դեբեդ	5	Մարցիգետի թափման կետից 0.5 կմ ներքև	-	-	-	1.47	-	-	-	-	-	-	-	-
	6	Այրումից 0.5 կմ վերև	-	-	0.037	-	0.52	-	-	-	-	-	-	-
	7	Սահմանի մոտ	-	0.039	-	-	0.58	-	-	-	-	-	-	-
Ախթալա	14	Գետաբերան	-	-	-	-	-	-	-	249.7	-	-	-	-
Արաքս	28	Արմաշ գյուղից 0.5 կմ ներքև	-	0.047	-	1.71	-	-	-	0.847	0.005	0.965	0.005	-
	29	Ազարակ գյուղից 2 կմ հարավ	-	0.189	16.57	1.53	-	144.95	-	0.333	0.009	-	0.003	-
	30	Ազարակ գյուղից 2.5 կմ հարավ-արևելք	-	0.221	19.01	1.59	-	139.55	-	0.430	0.009	-	0.005	-
Սևջուր	41	ք.Վաղարշապատից 11 կմ հարավ-արևելք	10.1	-	10.1	2.45	0.24	-	-	-	-	-	-	-
	42	Ռանչաբար գյուղից 0.5 կմ ներքև	-	-	-	2.33	0.16	-	-	-	-	-	-	-
Քասախ	47	Գետաբերան	-	-	-	1.57	0.08	-	-	-	-	-	-	-
Հրազդան	52	Քաղսի գյուղից 0.5 կմ ներքև	-	-	-	1.63	0.16	-	-	-	-	-	-	-
	53	Արգել գյուղից 0.5 կմ ներքև	-	-	-	1.86	0.16	-	-	-	-	-	-	-
	54	Արգնի ՀԷԿ-ից 0.5 կմ ներքև	-	-	-	1.65	0.08	-	-	-	-	-	-	-
	55	Դարբնիկ գյուղի մոտ	-	-	-	8.08	0.16	-	-	-	-	-	-	-
	56	Գետաբերան	-	-	-	14.39	0.08	-	-	-	-	-	-	-
Մարմարիկ	58	Գետաբերան	-	-	-	1.34	0.08	-	-	-	-	-	-	-
Գետառ	59	Գետաբերան	-	-	17.0	4.39	0.08	-	-	-	-	-	-	-
Չկնագետ	61	Գետաբերան	-	-	-	-	0.08	-	-	0.579	0.004	-	-	-
Մասրիկ	63	Գետաբերան	-	-	10.8	0.55	0.08	-	-	0.199	0.007	-	-	-
Սոթք	64	Հանքավայր	-	-	-	0.54	0.08	-	-	0.158	-	-	-	-
Կարճաղ-բյուր	67	Գետաբերան	-	-	-	0.54	0.08	-	-	0.062	0.006	-	-	-
Արփա-Սևան թունել	68	Ծովինար գյուղից 0.7 կմ վերև	-	-	-	1.12	-	-	-	0.225	0.002	-	-	-
Վարդենիս	70	Գետաբերան	-	-	-	2.57	0.08	-	-	0.342	0.002	-	-	-
Մարտունի	72	Գետաբերան	-	-	-	1.01	0.08	-	-	0.179	0.002	-	-	-
Արգիճի	74	Գետաբերան	-	-	-	0.86	0.08	-	-	0.195	0.002	-	-	-
Ծակքար	76	Գետաբերան	-	-	-	0.79	0.08	-	-	0.081	0.006	-	-	-
Գավառագետ	77	Ծաղկավան գյուղից 0.5 կմ վերև	-	-	-	0.86	-	-	-	0.250	-	-	-	-
	78	Գետաբերան	4.51	-	15.0	1.01	0.08	-	-	0.079	0.012	-	-	-
Ազատ	79	Գետաբերան	-	0.568	25.73	4.32	-	236.85	-	-	0.008	-	0.002	-
Վեդի	80	Ուրցածոր գյուղից 0.5 կմ վերև	-	-	18.37	3.95	-	-	-	1.200	0.004	1.41	0.005	-
	82	ք.Արարատից 2 կմ ներքև	-	-	-	0.82	-	-	-	1.340	0.005	1.46	0.004	-
Արփա	83	ք.Ջերմուկից 0.5 կմ վերև	-	0.032	-	0.86	-	-	-	0.500	0.002	-	0.002	-
	84	ք.Վայքից 0.5 կմ վերև	-	0.047	-	0.69	-	-	-	0.650	0.002	-	0.003	-
	85	ք.Վայքից 0.5 կմ ներքև	-	0.032	-	0.82	-	-	-	0.640	0.002	-	0.003	-
	86	ք.Եղեգնաձորից 0.5 կմ վերև	-	0.032	-	0.70	-	-	-	0.750	0.002	-	0.003	-
	87	Արենի գյուղից 0.5 կմ ներքև	-	0.032	13.39	2.34	-	-	-	0.310	-	-	0.004	-
Մեղրիգետ	89	ք.Մեղրիից 0.5 կմ վերև	-	-	-	0.56	-	-	-	0.082	-	-	-	-

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Անվանումը	Դիտակետի համարը	Դիտակետը (հատվածքը)	ՍԹԿ-ն գերազանցող միացությունների կոնցենտրացիաները											
			ԹԿՊ ₅ (ՍԹԿ՝ 3 մգ/լմ ³)	Նիտրիտ իոն (ՍԹԿ՝ 0.024 մգN/լմ ³)	Նիտրատ իոն (ՍԹԿ՝ 9.1 մգN/լմ ³)	Ամոնիում իոն (ՍԹԿ՝ 0.39 մգN/լմ ³)	Նավթամթերք (ՍԹԿ՝ 0.05 մգ/լմ ³)	Սուլֆատ իոն (ՍԹԿ՝ 100 մգ/լմ ³)	Մագնեզիում իոն (ՍԹԿ՝ 40 մգ/լմ ³)	Ալյումինիում (ՍԹԿ՝ 0.04 մգ/լմ ³)	Կամարիում (ՍԹԿ՝ 0.001 մգ/լմ ³)	Երկաթ (ՍԹԿ՝ 0.001 մգ/լմ ³)	Պղինձ իոն (ՍԹԿ՝ 0.5 մգN/լմ ³)	
	90	Գետաբերան	-	-	-	0.75	-	-	-	-	0.088	-	-	-
Ողջի	91	ք.Քաջարանից 1.7 կմ վերև	-	-	-	1.53	-	-	-	-	-	-	-	-
	92	ք.Քաջարանից 1.8 կմ ներքև	-	-	-	0.47	-	-	-	-	-	-	-	-
	93	ք.Կապանից 0.8 կմ վերև	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
	94	ք.Կապանից 6.8 կմ ներքև	-	-	-	0.59	-	-	-	-	0.260	-	-	-
Արժվանիկ	95	Պոչամբարից 0.5 կմ վերև	-	-	14.01	-	-	-	-	-	-	-	-	-
	96	Գետաբերան	-	0.679	-	4.21	-	-	-	-	-	-	-	-
Գեղի	97	Աջաբաջ գյուղից 0.5 կմ վերև	-	0.032	-	-	-	-	-	-	0.065	-	-	-
	98	Գետաբերան	-	-	-	-	-	-	-	-	0.072	-	-	-
Որոտան	99	Գորայք գյուղից 0.5 կմ վերև	-	-	-	13.3	-	-	-	-	0.633	0.002	-	-
	100	ք.Սիսիանից 1 կմ վերև	-	0.032	-	1.21	-	-	-	-	0.057	0.020	-	-
	101	ք.Սիսիանից 2 կմ ներքև	-	0.079	-	1.80	-	-	-	-	0.092	0.002	-	-
	102	Որոտան գյուղից 0.5 կմ ներքև	-	0.047	-	0.82	-	-	-	-	0.245	0.004	-	-
Գորիսգետ	106	ք.Գորիսից 3 կմ վերև	-	-	-	1.32	-	-	-	-	0.139	0.009	-	-
	107	ք.Գորիսից 1.5 կմ ներքև	-	0.268	17.78	1.93	-	-	-	-	-	0.010	-	-
Երևանյան լիճ	112	Գետառի թափման կետից վերև	-	-	-	1.77	0.24	-	-	-	-	-	-	0.010
Կեչուտի ջրամբար	114	Ամբարտակի մոտ	-	-	-	1.05	-	-	-	-	0.776	0.002	-	0.009

5.10. Անտառային տնտեսություն և անտառտնտեսական աշխատանքները 2004 թվականին

Ըստ ՀՀ բնապահպանության և ՀՀ գյուղատնտեսության նախարարությունների տեղեկատվության, 2004թ. ՀՀ անտառային ֆոնդը կազմել է 369.7 հազ. հա, որի մոտ 74.0%-ը ծածկված է անտառներով: Անտառվերականգնման աշխատանքներ են կատարվել 800.6 հա-ի վրա (ծախսված գումարը՝ 28036.6 հազ. դրամ), 2003թ. 700.1 հա-ի դիմաց, որից անտառի տնկում և ցանքս՝ 655.6 հա-ի վրա (17245.6 հազ. դրամ), 2003թ. 298.1 հա-ի դիմաց, ընդ որում՝ պետական նշանակության անտառներում անտառտնկում կատարվել է 534.0 հա-ի վրա, որի համար ծախսվել է 15615.6 հազ. դրամ:

Անտառի բնական վերածին օժանդակող միջոցառումներ են կատարվել 145.0 հա-ի վրա, որի համար ծախսվել է 6891.0 հազ. դրամ: Անտառկուլտուրաների լրացում և անտառապուրակի խնամք կատարվել է համապատասխանաբար 363.0 և 373.2 հա-ի վրա, որոնց համար ծախսվել է 3533.0 և 6050.0 հազ. դրամ: Բնափայտային և թփուտային տեսակների ցանքս է կատարվել 7.47 հա տնկարկներում (ծախսված գումարը՝ 6467.0 հազ. դրամ), անտառկուլտուրաների խնամք՝ 3526.4 հա-ի վրա (48866.8 հազ. դրամ), ծառատեսակների, թփերի պտղային և հատապտղային տեսակների սերմնաբույսերի հիմնում դպրոցներում՝ 5.37 հա-ի վրա (4155.0 հազ. դրամ), հող է նախապատրաստվել անտառկուլտուրաների, տնկարկների, տնկադաշտերի և դպրոցների ստեղծման համար 617.7 հա-ի վրա (46206.0 հազ. դրամ):

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

2004թ. մթերվել է 10565.5 կգ սերմ, որի համար ծախսվել է 7944.0 հազ. դրամ: Մթերված սերմի 97.2%-ը բաժին է ընկել սաղարթավոր և ծառաթփային տեսակներին (պտղահնդավորներ՝ 79 կգ, ընկուզապտղավորներ՝ 2390.0 կգ, կաղնի՝ 7020.0 կգ և այլ՝ 777.0 կգ), իսկ մնացած 2.8%-ը կամ 299.5 կգ-ը բաժին է ընկել փշատերևավորներին (հիմնականում սոճի՝ 273.5 կգ): Սերմերի մնացորդը տարեվերջին կազմել է 4836.5 կգ, որի 97.0%-ը բաժին է ընկել սաղարթավոր և ծառաթփային տեսակներին:

2004թ. պետական նշանակության անտառներում անտառի շարք է փոխադրվել անտառկուլտուրաներ 26.9 հա-ի վրա: Կատարվել է խոտհունձ 92.0 հա-ի վրա, որի դիմաց գանձվել է 330.7 հազ. դրամ:

Անտառհատումներ են կատարվել 764.5 հա տարածքի վրա (2003թ.՝ 3683 հա), որի 96.5%-ը կամ 737.5 հա-ն կազմել են սանիտարական հատումները, մնացածը՝ անցումային (20.0 հա) և այլ (7.0 հա) հատումներն են: Անտառհատումների համար ծախսված զուևարը կազմել է 324.0 հազ. դրամ, որից սանիտարական հատումների վրա՝ 304.0 հազ. դրամ:

Իրացվել է օգտագործման համար պիտանի 75.0 հազ. խիտ խոր.մ փայտանյութ (2003թ.՝ 75.6 հազ. խիտ խոր. մ), որի 14.3%-ը կամ 10.7 հազ. խիտ խոր. մ շինափայտ է: Շինափայտի ընդհանուր ծավալի մոտ 95.7%-ը ստացվել է քամատապալ ծառերի մթերումից:

Անտառհատումների և մթերված փայտանյութի ծավալները

Անտառհատումների տեսակները	Փաստացի հատված տարածքը, հա			Մթերված փայտանյութի ծավալը, խիտ խոր. մ					
				ընդամենը			որից՝ շինափայտ		
	2002թ.	2003թ.	2004թ.	2002թ.	2003թ.	2004թ.	2002թ.	2003թ.	2004թ.
Հատումների ծավալը, ընդամենը	3366	3683.0	764.5	68867	75569.0	74988	12890.0	13300.7	10698
այդ թվում՝ անտառվերականգնման	173	186.0	-	5259	5554.0	-	2012.0	1701.0	-
լուսավորման և մաքրման	34	6.5	-	191	35.0	-	8.0	-	-
նոսրացման	180	132.0	-	2254	1585.1	-	538.5	428.5	-
անցումային	274	389.0	20.0	6423	5725.0	173	1196.0	754.0	91
սանիտարական	2686	2940.0	737.5	54496	61839.4	11861	9134.0	10345.7	327
վերականգնման	-	-	-	-	-	-	-	-	-
այլ (ներառյալ քամատապալ ծառերը)	19	29.5	7.0	244	830.5	62954	1.5	71.5	10280

2004թ. արձանագրվել է անտառային հրդեհների 2 դեպք՝ 13.5 հա տարածքի վրա, 2003թ. համապատասխանաբար 4-ի և 3.9 հա-ի դիմաց: Հրդեհներն ընդգրկել են 1.5 հա անտառածածկ տարածք: Յուրաքանչյուր հրդեհ միջին հաշվով ընդգրկել է 0.75 հա անտառածածկ տարածք (2003թ.՝ 0.1 հա):

Անտառային հրդեհների քանակը և պատճառած վնասը

		2001թ.	2002թ.	2003թ.	2004թ.
Հրդեհների քանակը, միավոր		13	6	4	2
այդ թվում՝ ըստ պատճառների	գյուղատնտեսական հողատեսքերի հրկիզումից	1	2	-	1
	բնակչության մեղքով	11	4	4	1
	այլ կազմակերպությունների մեղքով	1	-	-	-
Հրդեհված տարածքի մակերեսը, հա		266.6	18.6	3.9	13.5
որից՝ անտառածածկ		126.8	5.7	0.4	1.5
Հրդեհներից անտառտնտեսություններին պատճառված վնասը, հազ. դրամ		55652.0	1064.5	-	975.2
Անտառվերականգնման աշխատանքների արժեքը, հազ. դրամ		10661.2	380.0	-	400.0
Տարածքի մաքրման աշխատանքների արժեքը, հազ. դրամ		610.0	4.5	-	7.5
Հրդեհների մարման ծախսերը, հազ. դրամ		1528.2	504.6	-	291.5
Հրդեհների հետ կապված ակտավորված հետաքննության նյութերի քանակը, միավոր		13	4	4	-
Անտառային պահախմբի կողմից վարչական կարգով	տուգանման դեպքերի քանակը, միավոր	2	3	-	-
	գանձված տուգանքը, հազ. դրամ	208.2	149.9	-	-

2004թ. կատարվել է անտառպաթուղոգիական ուսումնասիրություն 3773.2 հա-ի վրա (ծախսված գումարը՝ 693.0 հազ. դրամ), 2003թ. 3710 հա-ի դիմաց: Վերգետնյա պայքարի միջոցառումներ են կատարվել 100.0 հա-ի վրա (ծախսված գումարը՝ 510.0 հազ. դրամ), 2003թ. 691.0 հա-ի դիմաց: Չորացած անտառտնկարկների և անտառմշակաբույսերի տարածքը կազմել է 1776.0 հա (2003թ.՝ 1753 հա), բոլորն էլ՝ վնասակար միջատներից:

2004թ. անտառի վնասատուների և հիվանդությունների օջախները տարեսկզբին զբաղեցրել են 16.8 հազ. հա, որոնց համար պահանջվել են պայքարի միջոցառումներ, սակայն փաստացի կատարվել են 699.2 հա-ի վրա: Վնասատուների ու հիվանդությունների օջախները տարեվերջին կազմել են 20.4 հազ. հա (2003թ.՝ 13.8 հազ. հա):

Անտառի վնասատուների և հիվանդությունների օջախների առկայությունը, 2004թ.

(հեկտար)

	Վնասատուների և հիվանդությունների օջախները տարեսկզբին	Վերացված է պայքարի միջոցառումներով	Վնասատուների և հիվանդությունների օջախները տարեվերջին
Փշատերևավորների վնասատուներ	414	1	563
Տերևակեր վնասատուներ	13120	660	15310
այդ թվում՝ տարագույգ և օղակավոր մետաքսագործներ	2478	13	2660
ոսկետուտ	9942	642	10960
կաղնու կանաչ տերևամոլոր	545	5	390
երկրաչափեր	155	-	1300
Անտառի այլ վնասատուներ	432	35	317
այդ թվում՝ ծառի բնի	40	-	40
սերմերի և կոնների	100	-	100
կրծողներ	255	5	170
Անտառի հիվանդություններ	2843	3	4210
այդ թվում՝ կաղնու ալրացող	2493	3	3090
այլ	350	-	1120
Ընդամենը	16809	699	20400

2004թ. իրականացված անտառտնտեսական աշխատանքների ծավալը կազմել է 876.2 մլն. դրամ, 2003թ. 593.5 մլն. դրամի դիմաց:

Կանաչ գոտիների բարեկարգում կատարվել է 373.2 հա տարածքի վրա, որի համար ծախսվել է 6.6 մլն. դրամ:

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

2004թ. արձանագրվել է անտառախախտումների 1090 դեպք 2003թ-ի 1927-ի դիմաց: Վնասի ընդհանուր գումարը, ըստ անտառախախտման ակտերի, կազմել է 45.3 մլն. դրամ, որի 23.1%-ը կամ 10.4 մլն. դրամն անտառախախտողների կողմից մինչև 01.01.2005թ. կամավոր մուծվել է: Անտառախախտումների 30.2%-ի կամ 329 դեպքի քննությունը հանձնվել է իրավապահ մարմիններին, դրանց 38.9%-ի կամ 128 դեպքի վերաբերյալ քրեական գործ է հարուցվել և նշանակվել տույժ: Վերականգնված ընդհանուր գումարը կազմել է 12.8 մլն. դրամ, որի 18.6%-ը վերականգնվել է ըստ վճիռների:

Անտառախախտումներն ըստ տեսակների

		2001թ.	2002թ.	2003թ.	2004թ.
Ապօրինի անտառախախտումներ	ակտերի քանակը, միավոր	1658	2065	1732	926
	ծառերի քանակը, միավոր	7652	10241	6684	5172
	ծավալը, խոր. մ	2772.7	3395.1	2559.8	4459.9
Անասունների չթույլատրված արածեցում	ակտերի քանակը, միավոր	85	148	117	80
	զլխաքանակը, միավոր	4856	4360	4503	3733
Հողազավթում	ակտերի քանակը, միավոր	60	24	26	26
	տարածքը, հա	114.9	3.2	4.3	4.6
Անօրինական խոտհունձ և այլն	ակտերի քանակը, միավոր	4	4	13	7
	տարածքը, հա	2.5	3.4	24.0	2.8
Որսկանոցների խախտումների ակտերի քանակը, միավոր		160	15	39	51
Ակտերի ընդհանուր քանակը, միավոր		1967	2256	1927	1090

Անտառախախտումների գործերի շարժն ըստ տեսակների, 2004թ.

(միավոր)

	Ընդամենը	այդ թվում՝ ըստ անտառախախտման տեսակների				
		ապօրինի անտառախախտումներ	անասունների չթույլատրված արածեցում	հողազավթում	անօրինական խոտհունձ և այլն	որսկանոցների խախտումներ
Հանձնվել է հետաքննության	329	306	10	2	2	9
որից՝ հարուցվել է քրեական գործ	128	123	3	1	-	1
մերժվել է	1	1	-	-	-	-
նշանակվել է տույժ	41	32	-	-	1	8
կարճվել է	1	-	-	-	1	-

Անտառախախտումների վնասի գումարի չափն ըստ տեսակների, 2004թ.

(հազ. դրամ)

	Գանձման ենթակա վնասի գումարը	որից		Վերականգնված ընդհանուր գումարը
		կամավոր մուծվել է ըստ անտառախախտման ակտերի	վերականգնվել է ըստ վճիռների	
Ապօրինի անտառախախտումներ	41575.8	9860.8	2384.6	12245.4
Անասունների չթույլատրված արածեցում	2369.8	469.3	-	469.3
Հողազավթում	445.6	117.1	-	117.1
Անօրինական խոտհունձ և այլն	443.5	11.5	-	11.5
Որսկանոցների խախտումներ	500.0	-	-	-
Ընդամենը	45334.7	10458.7	2384.6	12843.3

5.11. Հատուկ պահպանվող տարածքները 2004 թվականին

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության ամփոփ տեղեկատվության, 2004թ. հանրապետության 2 ազգային պարկերի և 3 պետական արգելոցների ընդհանուր մակերեսը կազմել է 218.2 հազ. հա: Անտառածածկ տարածքը կազմել է դրանց ընդհանուր տարածքի

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

24.3%-ը (53.1 հազ. հա), մարգագետինները՝ 13.0%-ը (28.4 հազ. հա), ջրածածկ տարածքները՝ 57.6%-ը (125.6 հազ. հա), իսկ 5.1%-ը (11.1 հազ. հա)՝ այլ տարածքներն են: Հատուկ տարածքներով անցնող բոլոր կարգի ճանապարհների երկարությունը կազմել է 846 կմ:

Հատուկ պահպանվող տարածքների աշխատողների թվաքանակը տարեվերջին կազմել է 462 մարդ, որոնց 5.6%-ը գիտական աշխատողներն են, 57.2%-ը՝ պահպանության ծառայության աշխատողները, իսկ 37.2%-ը՝ այլ բնույթի աշխատողներ:

Ֆինանսական մուտքերը կազմել են 266.6 մլն. դրամ, որից 176.7 մլն. դրամը՝ ՀՀ պետական բյուջեից, 89.9 մլն. դրամը՝ արտաբյուջետային միջոցներից: Ֆինանսական ծախսերը կազմել են 266.5 մլն. դրամ, որի 17.7%-ը (47.2 մլն. դրամ) կազմել են նյութական ծախսերը, 14.9%-ը (39.8 մլն. դրամ)՝ ոչ նյութական ծառայությունների վճարումները, 0.5%-ը (1.4 մլն. դրամ)՝ գործուղման ծախսերը, 35.6%-ը (94.8 մլն. դրամ)՝ աշխատավարձը և դրան հավասարեցված այլ վճարումները, 11.1%-ը (29.6 մլն. դրամ)՝ պարտադիր սոցիալական ապահովագրական վճարները, 20.2%-ը (53.7 մլն. դրամ)՝ այլ ծախսերը:

5.12. Հանրապետության համայնքների գազաֆիկացումը 2004 թվականին

2004թ. բնական գազ են ստացել հանրապետության քաղաքային համայնքների 85.4%-ը, իսկ նախկինում գազաֆիկացված 365 գյուղական համայնքներից 312-ը կամ 85.5%-ը: Ընդ որում, մինչ վերագործարկման աշխատանքները սկսելը բնական գազով գազաֆիկացված չեն եղել Շամլուղ, Մեղրի, Ագարակ և Դաստակերտ քաղաքները:

2005թ. հունվարի 1-ի դրությամբ գազի փողոցային գործող ցանցի միագիծ երկարությունը կազմել է մինչ վերագործարկվելը եղածի 67.2%-ը, այդ թվում քաղաքային համայնքներում՝ 68.0%-ը, գյուղական համայնքներում՝ 66.5%-ը:


Գազի փողոցային ցանցի միագիծ երկարությունն ըստ մարզերի և ըստ քաղաքային ու գյուղական համայնքների, 2004թ.

(կմ)

	Գազի փողոցային գործող ցանցի միագիծ երկարությունն ըստ համայնքների տարեսկզբին					
	տարեսկզբին		գործարկվել է հաշվետու տարում		տարեվերջին	
	քաղաքային	գյուղական	քաղաքային	գյուղական	քաղաքային	գյուղական
ք.Երևան	457.26	-	220.16	-	677.42	-
Արագածոտն	83.30	122.30	19.90	23.90	103.20	146.20
Արարատ	101.35	504.14	13.15	47.29	114.50	551.43
Արմավիր	216.70	736.86	58.91	176.65	275.61	913.51
Գեղարքունիք	167.93	434.68	10.91	58.76	178.84	493.44
Լոռի	327.41	305.59	23.75	11.07	351.16	316.66
Կոտայք	207.78	430.66	25.92	1.98	233.70	432.64
Շիրակ	374.35	240.93	83.33	27.52	457.68	268.45
Սյունիք	131.56	75.07	10.78	21.53	142.34	96.60
Վայոց ձոր	41.64	10.38	5.18	19.54	46.82	29.92
Տավուշ	239.23	80.24	4.79	7.28	244.02	87.52
Ընդամենը ՀՀ	2348.51	2940.85	476.78	395.52	2825.29	3336.37


Գազի փողոցային գործարկված ցանցի միագիծ երկարությունն ըստ քաղաքային և գյուղական համայնքների, 1997-2004թթ.

(կմ)



Գազի փողոցային ցանցի միագիծ երկարությունն ըստ մարզերի, 2004թ.

(կմ)



1997թ. սեպտեմբերից մինչև 2005թ. հունվարի 1-ը բնական գազով փաստացի գազաֆիկացվել է 269786 բնակարան և բնակելի տուն, այդ թվում քաղաքային համայնքներում՝ 187621, գյուղական համայնքներում՝ 82165:

Գազաֆիկացված բնակարանների և բնակելի տների քանակն ըստ մարզերի և ըստ քաղաքային ու գյուղական համայնքների, 2004թ.


(միավոր)

	Գազաֆիկացված բնակարանների և բնակելի տների քանակն ըստ համայնքների					
	տարեսկզբին		գործարկվել է հաշվետու տարում		տարեվերջին	
	քաղաքային	գյուղական	քաղաքային	գյուղական	քաղաքային	գյուղական
ք.երևան	36994	-	29706	-	66700	-
Արագածոտն	1729	1062	1740	484	4079	1546
Արարատ	4538	14789	1499	2100	6037	16889
Արմավիր	10176	10345	3184	3197	13360	13542

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ


	Գազաֆիկացված բնակարանների և բնակելի տների քանակն ըստ համայնքների տարեսկզբին					
	տարեսկզբին		գործարկվել է հաշվետու տարում		տարեվերջին	
	քաղաքային	գյուղական	քաղաքային	գյուղական	քաղաքային	գյուղական
Գեղարքունիք	10089	106849	2583	1900	12672	18749
Լոռի	15195	5448	8922	1085	24117	6533
Կոտայք	7817	10771	5616	1978	13433	12749
Շիրակ	16079	5825	12482	939	28561	6764
Սյունիք	4358	1590	2982	422	7340	2012
Վայոց ձոր	3470	80	556	142	3326	222
Տավուշ	5981	2602	1311	561	7292	3163
Ընդամենը ՀՀ	117036	69361	70581	12808	187617	82169

Գազաֆիկացված բնակարանների և բնակելի տների քանակն ըստ մարզերի, 2004թ. (%-ով ընդհանուրից)



Գազաֆիկացված բնակարանների և բնակելի տների քանակն ըստ քաղաքային և գյուղական համայնքների, 1997-2004թթ.

(միավոր)



5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Գազի փողոցային ցանցի միագիծ երկարությունը և գազաֆիկացված բնակարանների և բնակելի տների քանակը ըստ քաղաքների, 2004թ.

	Գազի փողոցային գործող ցանցի միագիծ երկարությունը, կմ			Գազաֆիկացված բնակարանների և բնակելի տների քանակը, միավոր		
	տարեսկզբին	գործարկվել է հաշվետու տարում	տարեվերջին	տարեսկզբին	գործարկվել է հաշվետու տարում	տարեվերջին
Երևան	457.26	220.16	677.42	36994	29706	66700
Աշտարակ	36.00	12.80	48.80	731	1316	2047
Ապարան	27.30	2.60	29.90	930	204	1134
Թալին	20.00	4.50	24.50	678	220	898
Արարատ	11.57	2.70	14.27	335	161	496
Վեդի	31.98	3.13	35.11	1378	256	1634
Արտաշատ	41.00	5.92	46.92	1956	935	2891
Մասիս	16.80	1.40	18.20	869	147	1016
Արմավիր	92.50	58.91	151.41	3482	1164	4646
Վաղարշապատ	124.20	-	124.20	6694	2020	8714
Գավառ	55.16	4.57	59.73	4012	593	4605
Մարտունի	26.17	-	26.17	1907	334	2241
Սևան	55.28	4.57	59.85	2808	1256	4064
Վարդենիս	31.32	1.77	33.09	1362	400	1762
Վանաձոր	114.34	20.85	135.19	9026	7018	16044
Ալավերդի	15.80	0.03	15.83	340	607	947
Սպիտակ	69.90	2.27	72.17	1873	661	2534
Ստեփանավան	55.57	0.60	56.17	1943	478	2421
Տաշիր	71.80	-	71.80	2013	158	2171
Աբովյան	47.78	9.47	57.25	1708	3109	4817
Բյուրեղավան	3.90	2.43	6.33	112	49	161
Հրազդան	91.80	6.67	98.47	2686	653	3339
Չարենցավան	21.60	3.39	24.99	385	911	1296
Ծաղկաձոր	6.50	0.47	6.97	252	133	385
Եղվարդ	30.90	-	30.90	1110	505	1615
Նոր-Հաճրն	5.30	3.49	8.79	1564	256	1820
Գյումրի	309.33	67.72	377.05	13540	10775	24315
Մարալիկ	18.25	0.29	18.54	819	217	1036
Արթիկ	46.77	15.32	62.09	1720	1490	3210
Գորիս	53.75	2.56	56.31	1889	447	2336
Կապան	50.25	3.96	54.21	1163	1492	2655
Քաջարան	3.43	-	3.43	300	484	784
Սիսիան	24.13	4.26	28.39	1006	559	1565
Եղեգնաձոր	18.80	0.27	19.07	1253	363	1616
Վայք	15.46	1.17	16.63	559	160	719
Ջերմուկ	7.38	3.74	11.12	1658	33	1691
Իջևան	70.15	3.15	73.30	2042	764	2806
Նոյեմբերյան	44.74	0.66	45.40	813	82	895
Բերդ	31.54	0.74	32.28	150	245	395
Դիլիջան	92.80	0.24	93.04	2976	220	3196
ԸՆԴԱՄԱՆՆԵՐ	2348.51	476.78	2825.29	117036	70581	187617

Բոլոր սպառողներին բաց թողնված բնական գազի ծավալն ըստ մարզերի, 2004թ.

	Բոլոր սպառողներին բաց թողնված գազը		փաստացի տրված գազի ընդհանուր ծավալը, %		
	ընդամենը, մլն. խոր. մ	%-ով ընդհանուրից	բնակչությանը	կոմունալ-կենցաղային օբյեկտներին	արտադրությանը
ք.Երևան	315.988	26.2	18.4	0.5	81.1
Արագածոտն	6.116	0.5/100.0	64.1	0.2	35.7
ք.Աշտարակ	2.857	46.7	41.2	-	58.8
ք.Ապարան	0.846	13.8	89.6	-	10.4
ք.Թալին	1.281	21.0	66.4	1.1	32.5
գյուղական վայրերում	1.132	18.5	100.0	-	-
Արարատ	125.098	10.4/100.0	20.0	0.2	79.8
ք.Արարատ	82.615	66.0	0.4	-	99.6


5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

	Բոլոր սպառողներին բաց թողնված գազը		փաստացի տրված գազի ընդհանուր ծավալը, %		
	ընդամենը, մլն. խոր. մ	%-ով ընդհանուրից	բնակչությանը	կոմունալ-կենցաղային օբյեկտներին	արտադրությանը
ք.Վեդի	4.690	3.8	28.3	-	71.7
ք.Արտաշատ	6.910	5.5	35.3	-	64.7
ք.Սասիս	5.579	4.5	18.4	0.3	81.3
գյուղական վայրերում	25.304	20.2	78.7	0.6	20.7
Արմավիր	46.106	3.8/100.0	50.4	0.1	49.5
ք.Արմավիր	10.223	22.2	38.2	0.3	61.4
ք.Վաղարշապատ	16.734	36.3	36.7	-	63.3
ք.Մեծամոր	1.869	4.0	-	-	100.0
գյուղական վայրերում	17.280	37.5	76.4	-	23.6
Գեղարքունիք	35.868	3.0/100.0	73.3	0.4	26.2
ք.Գավառ	5.525	15.4	68.7	1.7	29.6
ք.Մարտունի	4.823	13.4	46.7	-	53.3
ք.Ճամբարակ	0.205	0.6	-	-	100.0
ք.Սևան	6.096	17.0	44.3	0.3	55.4
ք.Վարդենիս	3.561	9.9	55.8	0.2	44.0
գյուղական վայրերում	15.658	43.7	99.5	0.2	0.3
Լոռի	47.024	3.9/100.0	39.5	0.9	59.6
ք.Վանաձոր	17.626	37.5	52.2	1.5	46.3
ք.Այվերդի	16.189	34.4	1.6	-	98.4
ք.Սպիտակ	3.654	7.8	59.4	0.3	40.3
ք.Ստեպանավան	4.091	8.7	42.3	1.4	56.3
ք.Տաշիր	1.860	3.9	89.9	1.2	8.9
գյուղական վայրերում	3.604	7.7	98.2	1.0	0.8
Կոտայք	544.984	45.1/100.0	3.9	0.1	96.0
ք.Արուսյան	26.952	4.9	8.2	0.2	91.6
ք.Բյուրեղավան	0.529	0.1	16.3	-	83.7
ք.Հրազդան	492.173	90.3	0.5	-	99.5
ք.Զարենցավան	3.647	0.7	14.5	2.4	83.1
ք.Ծաղկաձոր	1.360	0.2	33.6	-	66.4
ք.Եղվարդ	1.748	0.3	87.5	0.2	12.3
ք.Նոր-Հաճրն	1.386	0.3	95.0	0.8	4.2
գյուղական վայրերում	17.189	3.2	76.0	0.3	23.7
Շիրակ	54.315	4.5/100.0	56.8	11.5	31.7
ք.Գյումրի	39.255	72.3	51.2	15.9	32.9
ք.Մարալիկ	0.986	1.8	98.9	-	1.1
ք.Արթիկ	5.583	10.3	55.3	0.1	44.6
գյուղական վայրերում	8.491	15.6	78.3	0.5	21.2
Սյունիք	16.982	1.4/100.0	32.6	0.1	67.3
ք.Գորիս	3.110	18.3	58.4	0.1	41.5
ք.Կապան	2.575	15.2	40.1	0.3	59.6
ք.Քաջարան	7.877	46.4	2.0	-	98.0
ք.Սիսիան	2.035	11.9	56.1	-	43.9
գյուղական վայրերում	1.385	8.2	99.7	0.3	-
Վայոց ձոր	5.726	0.5/100.0	47.9	0.1	52.0
ք.Եղեգնաձոր	1.472	25.7	84.4	-	15.6
ք.Վայք	2.019	35.3	24.2	0.1	75.7
ք.Ջերմուկ	2.001	34.9	42.9	-	57.1
գյուղական վայրերում	0.234	4.1	65.8	0.4	33.8
Տավուշ	8.447	0.7/100.0	55.8	0.2	44.0
ք.Իջևան	2.922	34.6	48.1	0.4	51.5
ք.Նոյեմբերյան	1.725	20.4	26.1	-	73.9
ք.Բերդ	0.282	3.3	40.1	-	59.9
ք.Դիլիջան	2.325	27.5	66.8	0.3	32.9
գյուղական վայրերում	1.193	14.1	99.9	0.1	-
Ընդամենը	1206.654	100	18.3	0.7	81.0
քաղաքներում	1115.184	92.4	13.0	0.7	86.3
գյուղերում	91.470	7.6	82.8	0.4	16.8

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

2004թ. բոլոր սպառողներին բաց է թողնվել 1206.654 մլն. խոր. մ բնական գազ (2003թ.՝ 1022.39 մլն. խոր. մ), այդ թվում քաղաքային համայնքներում՝ 1115.184 (92.4%), 2003թ. 948.75 մլն. խոր. մ-ի դիմաց, գյուղական համայնքներում՝ 91.470 (7.6%), 2003թ. 73.64 մլն. խոր. մ-ի դիմաց: Բոլոր սպառողներին բաց թողնված բնական գազի ընդհանուր քանակի 18.3%-ը (2003թ.՝ 15.0%) տրվել է բնակչությանը (բնակարանային ֆոնդին), 0.7%-ը (2003թ.՝ 5.7%)՝ կոմունալ-կենցաղային օբյեկտներին, իսկ մնացած 81.0%-ն (2003թ.՝ 79.3%) օգտագործվել է արտադրական կարիքների համար:

Քաղաքային և գյուղական բնակչությանը փաստացի տրված բնական գազի ծավալն ըստ մարզերի և ըստ քաղաքային ու գյուղական համայնքների, 2004թ.
(%-ով ընդհանուրից)



Բնակչությանը փաստացի տրված բնական գազի ծավալն ըստ մարզերի և ըստ քաղաքային ու գյուղական համայնքների, 2004թ.
(%-ով ընդհանուրից)


	Ընդամենը	այդ թվում՝	
		քաղաքային համայնքներում	գյուղական համայնքներում
ք.երևան	26.3	40.1	-
Արագածոտն	1.8	1.9	1.5
Արարատ	11.4	3.6	26.3
Արմավիր	10.6	7.0	17.4
Գեղարքունիք	11.9	7.4	20.5
Լոռի	8.4	10.4	4.7
Կոտայք	9.8	5.8	17.2
Շիրակ	14.0	16.7	8.8
Սյունիք	2.5	2.9	1.8
Վայոց ձոր	1.2	1.8	0.2
Տավուշ	2.1	2.4	1.6
Ընդամենը ԳԳ	100	100	100

Բնակչությանը տրված բնական գազի 65.6%-ը տրվել է քաղաքային, 34.4%-ը՝ գյուղական բնակչությանը:

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Բնական գազի իրացման ծավալները, 1960-2004թթ.

(մլն. խոր. մ)



Ըստ «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ տվյալների, 2004թ. գազամատակարարման բաժանորդային համակարգում ընդգրկվածներին տրվել է 826.5 տոննա հեղուկ գազ:

Հեղուկ գազի ստացումը և իրացումը, 2004թ.

(տոննա)

Մնացորդը տարեսկզբին	34.8
Ստացվել է հաշվետու տարվա ընթացքում	914.0
Տարեկան կորուստը	12.2
Հեղուկ գազի իրացումը	826.5
որից՝ բնակչությանը	826.1
այդ թվում՝ քաղաքային	826.5
գյուղական	-
Մնացորդը տարեվերջին	110.1

Ըստ ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի տրամադրած տեղեկատվության, 2004թ. հանրապետություն մուտք է գործել 23476.5 տ հեղուկ գազ: Ցուցանիշների անհամապատասխանությունը բացատրվում է նրանով, որ իրացված հեղուկ գազի ներկրմամբ և վաճառքով զբաղվում են նաև անհատ ձեռնակատերեր և իրավաբանական անձինք, որոնք վիճակագրական հաշվառման դաշտում առայժմ ընդգրկված չեն:

Բնական և հեղուկ գազի իրացումից ստացված ֆինանսական ընդհանրացված ցուցանիշները, 2004թ.

(մլն. դրամ)

	Ընդամենը	այդ թվում՝ ըստ բաց թողնված գազի տեսակի	
		բնական	հեղուկ
Մուտքեր	56120.2	55916.8	203.4
որից՝ բնակչությունից	10584.4	10392.1	192.3
Ծախսեր	61143.2	60942.9	200.3

Հանրապետությունում իրացված բնական գազի դիմաց չվճարելու պատճառով տարիների ընթացքում կուտակված պարտքը 2005թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 22346.1 մլն. դրամ (2004թ. հունվարի 1-ի դրությամբ՝ 34378.5 մլն. դրամ), որից բնակչությունից՝ 2680.7 մլն. դրամ (2004թ. հունվարի 1-ի դրությամբ՝ 2060.7 մլն. դրամ):

5.13. Բնակարանային ֆոնդի և այլ նշանակության օբյեկտների (կոմունալ-կենցաղային և արտադրական) ջերմամատակարարումը 2004 թվականին

Բնակչությանը և կոմունալ-կենցաղային կարիքների համար ջերմային էներգիա մատակարարող կազմակերպություններում առկա 233 կաթսայատներից 2004թ. գործել են 11-ը, որից 10-ը՝ ք.Երևանում: Անփոփ ցուցանիշներում չեն ներառվել ջերմարտադրող այն կազմակերպությունների հաշվետվային տվյալները, որոնց արտադրած ջերմային էներգիան ծախսվել է միայն արտադրական կարիքների համար: 11 կաթսայատների համակարգում գործել են 20 կաթսաներ: Աշխատող կաթսայատների գումարային հզորությունը կազմել է 131 Գկալ/ժ (1 Գկալ=10⁹ կալ): 2004թ. ջեռուցման ժամանակահատվածում բոլոր կաթսայատների կողմից ջերմային էներգիայի արտադրության համար օգտագործվել է 2.0 մլն. խոր. մ գազ, այդ թվում ք.Երևանում՝ 1.8 մլն. խոր. մ:

Գործող ջերմային ցանցերի գումարային երկարությունը (երկխողովակային հաշվարկմամբ) կազմել է 734.8 կմ, որի 59.6%-ը կարիք ունի փոխարինման, 26.9%-ը՝ վերանորոգման: Գոլորշու ցանցերի գումարային երկարությունը կազմել է 48.0 կմ:

2004թ. ընթացքում գործող կաթսայատների կողմից արտադրվել է 396.5 հազ. Գկալ ջերմային էներգիա, որից ք.Երևանում՝ 269.3 հազ. Գկալ: Ջերմային էներգիայի ընդհանուր կորուստները կազմել են 49.7 հազ. Գկալ կամ 12.6%, ք.Երևանում՝ համապատասխանաբար 30.5 հազ. Գկալ և 11.4%:


Բոլոր սպառողներին բաց թողնված ջերմային էներգիայի քանակը, 2004թ.

	Բոլոր սպառողներին բաց թողնված ջերմային էներգիան, Գկալ	Փաստացի ստացված ջերմային էներգիայի ընդհանուր ծավալից, %		
		բնակչությանը	կոմունալ-կենցաղային օբյեկտներին	արտադրությանը
Ընդամենը	339023	28.2	12.6	59.2
որից՝ ք.Երևան	238826	6.6	15.0	78.4

Հանրապետության 48 քաղաքներից բնակչությանը ջերմային էներգիա մատակարարվել է Երևան, Գյումրի և Հրազդան քաղաքներում:

Քաղաքային համայնքների բնակչությանը տրված ջերմային էներգիայի քանակը, 2004թ.

(%-ով ընդհանուրից)



2004թ. ընթացքում ջեռուցվել է 592 բազմաբնակարան շենք և 771 բնակելի տուն: Հինգ և ավելի հարկանի ջեռուցված շենքերի քանակը կազմել է բազմաբնակարան շենքերի 25.5%-ը: Ք.Երևանում այդ ցուցանիշը կազմել է 58.1%: Բազմաբնակարան շենքերում

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

ջեռուցված բնակելի մակերեսը կազմել է 793.5 հազ. քառ. մ, որից 268.1 հազ. քառ. մ-ը՝ հինգ և ավելի հարկանի շենքերում:

2004թ. հանրապետությունում գործող ջերմարտադրող և ջերմամատակարարող կազմակերպությունների արտադրական կարողությունների միջին տարեկան հաշվեկշռային արժեքը կազմել է 96.7 մլն. դրամ: Ընդհանուր մուտքերը կազմել են 1508.4 մլն. դրամ, այդ թվում 152.4 մլն. դրամը՝ ՀՀ բյուջեից, 1345.1 մլն. դրամը՝ ջերմային էներգիայի իրացումից, 10.9 մլն. դրամը՝ այլ մուտքեր: Ջերմային էներգիայի իրացումից ստացված մուտքերի 16.6%-ը բնակչությունից է:

Ծախսերի ընդհանուր գումարը կազմել է 918.5 մլն. դրամ: Ըստ ծախսումների առանձին հոդվածների, ծախսերի պատկերը հետևյալն է. 69.5%-ը նյութական ծախսերն են, 0.6%-ը՝ ոչ նյութական ծառայությունների վճարումները, 18.3%-ը՝ աշխատավարձը և դրան հավասարեցված վճարումները, 4.2%-ը՝ պարտադիր սոցիալական ապահովագրական վճարները, մնացածն այլ բնույթի ծախսեր են:

Հանրապետությունում ջերմային էներգիայի մատակարարումից տարիների ընթացքում կուտակվել է 12882.0 մլն. դրամի պարտք, որից բնակչությունից՝ 7221.0 մլն. դրամի կամ 56.1%, իսկ 2004թ.՝ 1066.3 մլն. դրամի, որից բնակչությունից՝ 161.8 մլն. դրամի կամ 15.2%:

Տարիների ընթացքում ջերմային էներգիայի մատակարարումից կուտակված պարտքերի 46.3%-ը բաժին է ընկել ք.երևանին: 2004թ. այդ ցուցանիշը կազմել է 62.4%:

Բնակարանային ֆոնդի և այլ նշանակության օբյեկտների (կոմունալ-կենցաղային և արտադրական) ջերմամատակարարումը, 1994-2004թթ.

(հազ. զկալ)

	1994	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004
Հանրապետությունում սպառողներին բաց թողնված ջերմային էներգիան այդ թվում՝	821.5	1040.0	840.4	965.6	1041.8	794.7	990.3	636.1	443.3	438.8	339.0
բնակչությանը	363.4	577.7	492.4	474.3	574.5	383.8	515.8	303.2	204.3	224.3	95.5
կոմունալ-կենցաղային կարիքների համար	88.5	89.0	43.2	150.9	53.9	54.5	62.7	52.7	60.3	53.9	42.6
արտադրական կարիքների համար	369.6	373.3	304.8	340.4	413.4	356.4	411.8	280.2	178.7	160.6	200.9

5.14. Հանրապետության համայնքների ջրամատակարարումը 2004 թվականին

Ըստ ՀՀ Կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտեի ամփոփ տեղեկատվության, 2005թ. հունվարի 1-ի դրությամբ իրենց կողմից սպասարկվող կենտրոնացված ջրամատակարարման համակարգում ջրմուղի մագիստրալային ջրատարի, փողոցային, միջթաղային ու միջբակային ցանցերի միագիծ ընդհանուր երկարությունները համապատասխանաբար կազմել են 4960.6, 7252.4 և 1049.7 կմ, որից քաղաքային համայնքներում՝ 3601.3, 4029.5 և 1042.7 կմ:

Ջրմուղի ցանցերի միագիծ երկարություններն ըստ մարզերի, 2004թ.

(կմ)

	Մագիստրալային ջրատար	Փողոցային ցանց	որից՝ կարիք ունեն փոխման	Միջթաղային և միջբակային ցանց
ք.երևան	770.4	1056.9	919.6	518.6
Արագածոտն	493.0	410.7	210.7	13.0
Արարատ	367.0	1679.0	582.1	14.0
Արմավիր	432.5	636.6	308.2	70.6
Գեղարքունիք	403.7	453.2	264.3	24.0

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

	Մագիստրալային ջրատար	Փողոցային ցանց	որից՝ կարիք ունեն փոխման	Միջթաղային և միջբակային ցանց
Լոռի	559.0	673.0	457.6	130.0
Կոտայք	525.0	828.0	545.9	64.0
Շիրակ	607.0	888.0	572.3	79.0
Սյունիք	450.0	336.0	166.3	93.5
Վայոց ձոր	110.0	107.0	50.1	21.0
Տավուշ	243.0	184.0	94.1	22.0
Ընդամենը ՀՀ	4960.6	7252.4	4171.2	1049.7


2004թ. ցանցին տրվել է 565.8 մլն. խոր. մ ջուր (ք.Երևան՝ 367.4 մլն. խոր. մ), որից 311.9 մլն. խոր. մ-ը՝ ինքնահոսքով (ք.Երևան՝ 203.2 մլն. խոր. մ):

2004թ. ընթացքում սպառողներին բաց է թողնվել 124.9 մլն. խոր. մ ջուր, այդ թվում իր սպառողներին՝ 118.2 մլն. խոր. մ, այլ սպառողներին՝ 6.7 մլն. խոր. մ ջուր: Իր սպառողներին բաց թողնված ջրից բնակչությանը տրվել է 90.6 մլն. խոր.մ, կոմունալ-կենցաղային և արտադրական կարիքների համար՝ 27.6 մլն. խոր. մ ջուր:

Սպառողներին բաց թողնված ջրի ծավալների բաշխվածությունն ըստ մարզերի, 2004թ.


	Սպառողներին բաց թողնված ջուրը		Ընդհանուր բաց թողնվածից իր սպառողներին, մլն. խոր. մ
	ընդամենը, մլն. խոր. մ	%-ով ընդհանուրից	
ք.Երևան	72.8	58.3	66.1
Արագածոտն	3.2	2.6	3.2
Արարատ	7.1	5.7	7.1
Արմավիր	6.9	5.5	7.0
Գեղարքունիք	3.7	3.0	3.7
Լոռի	4.6	3.7	4.6
Կոտայք	7.6	6.1	7.6
Շիրակ	9.2	7.3	9.2
Սյունիք	6.4	5.1	6.4
Վայոց ձոր	1.8	1.4	1.8
Տավուշ	1.6	1.3	1.5
Ընդամենը ՀՀ	124.9	100.0	118.2

Իր սպառողներին տրված ջրի փաստացի ընդհանուր ծավալի տոկոսային բաշխվածությունն ըստ նպատակայնության և ըստ մարզերի, 2004թ.




Բնակչությանը տրված փաստացի ջրի քանակը, 1970-2004թթ.

(մլ/մ.խոր.մ)



2004թ. ջրի կորուստը կազմել է ցանցին տրված ջրի ընդհանուր ծավալի 78.0%-ը, Երևան քաղաքում՝ 80.2%-ը: Ջրի կորուստների հիմնական պատճառը ջրագծերի ֆիզիկական նաշվածությունն է: 2004թ. ընթացքում ջրմուղի համակարգում արձանագրվել է 23473 վթար, որից ք.Երևանում՝ 4130:

Ջրօգտագործման և ջրի կորուստների տոկոսային հարաբերակցությունն ըստ մարզերի, 2004թ.



5.15. Հանրապետության կոյուղու համակարգը 2004 թվականին

Ըստ ՀՀ Կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտեի ամփոփ տեղեկատվության, 2005թ. հունվարի 1-ի դրությամբ հանրապետության կոյուղու գլխավոր կոլեկտորի, փողոցային, միջթաղային ու միջբակային կոյուղու ցանցերի միագիծ ընդհանուր երկարությունները կազմել են համապատասխանաբար 1104.6, 2622.7 և 635.8 կմ, որից քաղաքային համայնքներում՝ 1047.6, 2426.3 և 630.8 կմ:

Կոյուղու ցանցերի միագիծ երկարություններն ըստ մարզերի, 2004թ.

(կմ)


	Գլխավոր կոլեկտոր	Փողոցային ցանց	որից՝ կարիք ունեն փոխման	Միջթաղային և միջբակային ցանց
ք.երևան	220.6	446.2	203.4	484.3
Արագածոտն	48.9	107.0	51.0	3.0
Արարատ	95.8	181.0	90.2	7.0
Արմավիր	58.0	245.5	82.0	4.0
Գեղարքունիք	141.5	176.0	71.1	12.5
Լոռի	130.7	368.0	174.4	26.0
Կոտայք	146.8	367.0	195.5	39.5
Շիրակ	76.7	322.0	166.1	21.0
Սյունիք	72.3	206.0	94.7	26.0
Վայոց ձոր	37.6	69.0	30.8	6.5
Տավուշ	75.7	135.0	34.1	6.0
Ընդամենը ՀՀ	1104.6	2622.7	1193.3	635.8

2004թ. ընթացքում կոյուղի բաց է թողնվել 89.3 մլն. խոր. մ կեղտաջուր: Մաքրող սարքավորումներով բաց է թողնվել 67.6 մլն. խոր. մ կեղտաջուր, այդ թվում՝ չափորոշային մաքրված՝ 61.5 մլն. խոր. մ, ոչ բավարար մաքրված՝ 6.1 մլն. խոր. մ: Առանց մաքրման հեռացվել է 21.7 մլն. խոր. մ կեղտաջուր:

2004թ. կոյուղու համակարգում արձանագրվել է 25782 վթար, որից ք.երևանում՝ 8453 կամ 32.8%:

Կոյուղի բաց թողնված կեղտաջրերի ծավալն ըստ մարզերի, 2004թ.


(մլն. խոր. մ)




5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Կոյուղի բաց թողնված կեղտաջրերի ծավալը, 1970-2004թթ.

(մլն. խոր. մ)




Ջրընդունիչներ բաց թողնված կեղտաջրերի տոկոսային բաշխվածությունը ըստ մարզերի և ըստ կեղտաջրերի որակական վիճակի, 2004թ.



5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ


Մաքրող սարքավորումներով բաց թողնված կեղտաջրերի ծավալն ըստ մարզերի, 2004թ.

(մլն. խոր. մ)




Մաքրող սարքավորումներով բաց թողնված կեղտաջրերի ծավալը, 1970-2004թթ.

(մլն. խոր. մ)



Առանց մաքրման հեռացվող կեղտաջրերի ծավալն ըստ մարզերի, 2004թ.

(մլն. խոր. մ)



ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության նախագահ

Ս. Մնացականյան